
ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ (1914-1948 թվականներ)

ՍՈՒՄԱՍՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կ. Զարյանի գրական հարուստ ժառանգությունը մեր գրականության լավագույն էջերից է: Նրա ստեղծագործություններին բնորոշ են հզոր երևակայությունը, պատկերավոր, անհատական մտածողությունը, երևույթները վերլուծելու խորաթափանց միտքը, խոր ու խոհական դատողությունները, որ արտահայտվում է «կյանքի շարունակական լիցքերի ներզորությամբ, մարդկային ճակատագրի ու հոգեղեն արձեքների անդրադառներով, բանաստեղծական պատկերների գաղափարական հագեցվածությամբ և իրերի ու երևույթների ոգեղեն ընկալումների հայտնատեսությամբ»¹: Իր ստեղծագործություններում նա դրսերում է տաղանդավոր արվեստագետի, գեղարվեստական խոսքի մեջ վարպետի անառարկելի կարողություններ՝ իր տեղը հաստելով հայ դասական գրողների ընտանիքում:

Սույն հոդվածը նվիրված է Կ. Զարյանի 1914-1948 թվականների բանաստեղծությունների բառապաշտի քննությանը: Հայոց ազգային աղետն ու համաշխարհային պատերազմի վերապրած, իր բնորոշումով՝ «կայտառ, արմենական» ոգով բանաստեղծի այս տարիների ստեղծագործությունը հայ ժողովրդի ողբերգության, թախծի ու տանջող տագնապների արտացոլումն է:

Մեր ընտրված բանաստեղծությունների բառապաշտի քննությունն առանձնանում է նրանով, որ հենց այս տարիներին է բանաստեղծի ստեղծագործությունը բուռն վերելք ապրում, վերջնականապես ձևավորվում է նրա բանաստեղծական յուրահատուկ մտածողությունը, հույժ գրավիչ, ինքնատիպ և ազդրու ոճը: Նա հետզհետեւ փորձում է հասու լինել մտածողության ներքին օրինաչափություններին, մեր հին բանաստեղծության գաղտնիքներին և մուծել դրանք իր ստեղծագործության մեջ:

1922 թ. Կ. Զարյանը գալիս է բնակվելու իր երազած Հայաստանում, և հայրենական հարկի տակ նրա գրիչը դառնում է ավելի զորեղ՝ հայրենիքի հմայքի ու գեղեցկության, հրաշալի բնության, դժվարին լյանքի ու դառն իրականության պատկերներով լցված: Հայաստանում

¹ Ա. Ավագյան, Կոստան Զարյան. կյանքը և գործը, Եր., 1998, էջ 98:

ապրած կարձ ընթացքում է, որ հիմնավորապես ձևավորվել է բանաստեղծի շքեղ ու պատկերավոր լեզուն: Այստեղ նա վերադառնում է իր արմատներին, վերագտնում իր եռթյունը: Հայաստանը, Արարատ լեռը և Արարատյան դաշտը ճանաչում են արարատյան մարդուն, կերպավորում բանաստեղծին «ըստ պատկերի իրում» և հետ ճանապարհում նրան մեծ աշխարհ, որտեղ դեռ երկար պիտի տևեր երկրի ներկայությունը նրա բանաստեղծություններում²:

Հայտնի է, որ Կ. Զարյանի բառապաշարը առանձնանում է լեզվական երկու որակների՝ արևելահայ-արևմտահայ հանդիպադրումով, ուստի նա օգտվել է և արևելահայերենին, և՝ արևմտահայերենին բնորոշ բառապաշարից, ինչպես **կանանց // կանաչաթուր**³ (149): Կ. Զարյանի գործածած մի շաբք բառերի հնչյունափոխված և անհնչյունափոխ տարբերակներից առաջինը՝ բնորոշ է արևմտահայերենին, երկրորդը՝ արևելահայերենին, ինչպես **հուրիուրան** (159)-**հրահուր** (295), **սիրուրի** (174)-**սրտիս** (176), **մարմինիկ** (154) – **մարմնիդ** (321) և այլն: Իհարկե, հեղինակը հաճախ դիմել է բառերի հնչյունափոխական գուգածություններին ավելի շատ ենելով տաղաչափական պարտադրանքից: Տաղաչափական նպատակներին է ծառայում նաև միևնույն բարդության հոդակապով կամ անհոդակապ կիրառությունը, ինչպես՝ **արեւաբառ//արեւիրադ** (160), **արիւնաթափ//արիւնթափ** (135): Արևմտահայերենի ազդեցությունը հաճախ է նկատվում սեռական-տրականում **ու** հոլովման գործածությամբ՝ **դարու** (249), թեքված ձևերի՝ որոշյալ հոդով կազմություններում՝ գիշերին մէջ (130), ծովին հետ (130), շեմին առջեւ (183), արևմտահայերենին հասուլ որոշ բառերի կրծատումով՝ **բաժնել** (154), **չորցած** (162), ստացական դերանվան և ստացական հոդի միաժամանակյա կիրառությամբ՝ **իմ ձամրաս** (192), **իմ աչքերս** (185), **իմ կոկորդս** (272), **քո աչքերիդ** (282), բայական համակարգում ներկա և անցյալ անկատարի կազմությամբ **կը (կու, կ')** եղանակիչով՝ **կ'նայեմ** հանգիստ (191), **կը գնամ** (185), **կը երկարեմ** (294), **կուզամ** (191), արգելական հրամայականի **թ-ով** ձևերով՝ **մի լար** (241), խոսակցական լեզվին բնորոշ բառերի գործածությամբ՝ **մինակ** (184), **միս-մինակ** (192), **պաղ** (124), **ձերմակ** (155), **պռոալ** (203), կապերի՝ որոշիչ հոդով կիրառությամբ՝ Կոպերիդ **տակը** մի գիշեր կու լայ (219), ուղղականով ենթակայի անհոդ կիրառությամբ **Յիսուս** լուս աղօրում է (192):

Կ. Զարյանը իր բանաստեղծություններում ներդաշնակորեն գործածում է գրաբարյան բառեր ու բառաձևեր, հատկապես երբ խոսքը կարիք ունի հնավանդ ոգու վերստեղծման, հանդիսավորության ու վերամբարձության, օրինակ՝ **մի** բառի գրաբարյան հետադաս գործա-

² Տե՛ս Ե. Տեր-Վարդանյան, Կ. Զարյան, «Բառերի ուսկին» գրքի վերջաբանը, Եր., 2009, էջ 645:

³ Կ. Զարյան, Բառերի ուսկին: Բանաստեղծություններ, Եր., 2009, էջ 200 (այսուհետ սույն հրատարակությունից մեջբերումների էջերը կտրվեն տեքստում փակազծերի մէջ):

ծությունը՝ սուրբ *զիրք մի* զարդարուած (152), զրաբարյան հոգնակի կազմությունը՝ *նախնիք* (248), խոնարհման համակարգի զրաբարյան իրողությունները՝ *անկցի* (165), *կառուցանեմ* (174): Սրանք «քնարերգութեան մէջ յաճախ աւելի պատշաճ են, եւ աւելի կենդանի, քան ումիկ բառերը, որոնք քնքուշ, վառվուն, կտրուկ, զունագեղ են, բայց յաճախ չունին վեհութիւնը եւ լայնութիւնը հին բառերուն»⁴:

Կ. Զարյանի բանաստեղծությունների բառապաշարի քննության շրջանակում մեր ուշադրությանն են արժանացել հեղինակային նորաբանությունները, դրանց իմաստային կիրառությունները, ժողովրդական ու բարբառային բառերը, օտարաբանությունները:

Կ. Զարյանի բանաստեղծությունները լի են որևէ բառարանում շարձանագրված նորակազմություններով, որոնք դառնում են նրա բառապաշարը հարստացնելու հիմնական միջոց երբեմն կանոնավոր, երբեմն խախտված չափերով, նույնիսկ բանաստեղծական արձակի հնարքներով շաղախված հետաքրքիր պատկերային համակարգի ստեղծման համար՝ իր բանաստեղծական շրեղ ու ինքնատիպ մտածողությամբ հագեցած:

Կ. Զարյանի 1914-1948 թթ. բանաստեղծություններում հեղինակային նորակազմություն ենք համարել բոլոր այն բառերը, որոնք չկան «Նոր բառզիրք Հայկագեան լեզուի» (ՆՀԲ), Ստ. Մալխայանցի (ՀԲԲ), Էդ. Աղայանի (ԱՀԲԲ), Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարաններում (ԺՀԲԲ), Ռ. Սաքավետոյանի «Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարանում» (ԱԱՆԲ): Օգտվել ենք նաև ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հրատարակած «Նոր բառեր»⁵ գրքերից, որտեղ ներառված են զեղարվեստական զրականությունից հավաքված, բացատրական և նորաբանությունների բառարաններում չվկայված բազմաթիվ բառեր: Մենք նկատի չենք առել այն նորակազմ բառերը, որոնք արձանագրված են բառարաններում՝ որպես Կ. Զարյանի կողմից առաջին անգամ գործածված:

Կ. Զարյանը, լինելով ազատ բանաստեղծության վարպետ, կերտում է նոր բառեր՝ թեկուզ երբեմն անտեսելով խոսքային անհամաշխափությունը, ինչպես նաև բառերին նոր իմաստներ է հաղորդում՝ շեշտելով իր նկատածը, ինչպես՝ *աղեղալար* բաղաձանքներ (160), *բոյր* օր (327), *կարմրալանցի* թեւեր (339), *իմպերատոր* բլուր (332), *լուսաբաց* ուժեր (200), *բոյն* խոհեր (210), քանզի «... գրեթէ ոչ մի սովորական բառ նրան լիսապէս չի զոհացնում. իր զաղափարների ուժգնութեան առջեւ նա միշտ ծարաւ է, ու այս պատճառով փոխաբերականը իր հատու զէնքն է: Նրանք սովորական խնամքով չեն կերտուած, չեն իսկ վերջացած, մենք տեսնում ենք միայն նրանց որեւէ բնորոշ մասը, մի անկիւնը, մի զալարը, մի կեցուածքը, մի հատիկ շարժումը. մնացածը քո գործն է,

⁴ Ա. Զոպաննեան, «Անահիտ», հ. 5, Փարիզ, 1902, էջ 97:

⁵Տե՛ս «Նոր բառեր», Ս, Բ պրակ, Եր., 2015, 2016:

լրացրու ինչպէս կուզես եւ ինչպէս կարող ես»⁶:

Կ. Զարյան բանաստեղծը ուշադիր ու խստապահանջ չէ բառնատրության մեջ: Ինչպէս դիպուկ բնորոշում է Ա. Ահարոնյանը. «...իր բնութիւնը միշտ վայրենի է, որպէս իր լեզուն, իր հայերէնը: Հեթանոս դիցագներգակ է, որ գրում է աւելի բնազդով, քան սովորած օրէնքներով, եթիւ հրամայական պէտք ունի իր ներքին բուռն զգացողութիւնն ու մտածումը արտայայտելու: Նա շատ չի վարանի բառերի ընտրութեան առջեւ եւ կ'ասի իր խօսքը բրտորէն կամ նորը կը կերտի, հոգ չէ, թէ նրա վրայ կոշտ կերպով աչքի զարնեն կրած ու կոփուած կէտերը եւ թարմ տաշուածքները: Նա ժամանակ չունի խորհելու, ընտրելու, դասաւորելու, մշակելու. արդէն խորհուրդը իր ձեռքի շարժումի մեջ է: Հարուածում է գրանիդը, եւ կայծկալուուքք փայլվլուն մարզարիտներով սփուում է իր չորս կողմը: Եւ իր հարուածները իրենց աններդաշնակութեան մեջ խելայեղօրէն գեղեցիկ են: Երբ ինքն անզօր է, բնութիւնը կը խօսի իր փոխարէն վայրազօրէն հմայիչ, եւ միշտ լեզուական օրէնքները տրորում է ու անցնում, ինչպէս աշնան տերեւները խառնող կատաղի հողմ: Նա չի կարողանում զոհանալ չափուած, ձեւուած ու յղկուած լեզուական օրէնքներով, ձեւերով... բայց դրա փոխարէն աննման ոճաբան է»⁷:

Կ. Զարյանի՝ մեր քննած բանաստեղծություններում տեղ են գտել որևէ բառարանում շարտացոլված մոտ հարյուր անհատական նորակազմություններ: Նորակազմ բառերը կերտելիս նա դիմում է մեր լեզվում գործուն բառակազմական եղանակներին՝ բառաբարդմանն ու ածանցմանը՝ իրենց բազմազան արտահայտություններով: Գործառական ավելի մեծ հաճախականություն են դրսերում կենսունակ բառակազմական կաղապարները՝ ածանցավոր բառերն ու հոդակապով բարդությունները, իսկ գործածության տեսակետից Կ. Զարյանի հեղինակային նորակազմությունները հիմնականում ածական որոշիչներ են: Ըստ բարդությունների խոսքիմասային արտահայտության՝ նորակազմ բարդ բառերի կառուցվածքային կաղապարներում գործող ընդհանուր օրինաչափություն է առաջին հերթին գոյականի ակտիվությունը:

ա) **Գոյական+գոյական՝ արծաթազար(131), արկածատէնդ (257), բոցազանգ (187), իւղապատկեր (245), լուսահիռ (131), լուսազանգ (186), լուսանարգէս (329), ծխազիր (252), հրաբիսաերազ (146), հրածիլ (295), հրատէղ (334), յուսափատ (319), ուկեարին (246), ուկեթուր (164), սգաստէր (129), սուտակալրակ (148):**

բ) **Գոյական+ածական՝ արարչավառ (327), արեւասան (312), ջղակորով (336):**

գ) **Գոյական+բայ՝ աստեղացան (216), աստղաթափ (141), աստղանէտ (187), արեւահան//արեւնահան (156), արեւաշէն (174), արեւատու (160), թւարանւէլ (248), խելատէնչ (302), հրաթոր (311), հրաշավառ**

⁶ Ա. Ահարոնեան, «Հայրէնիք», Բուստոն, 1930, հ. 9, էջ 61:

⁷ Նույն տեղում, էջ 60:

(334), մահազրաւ (196), ոսկեզեռ (397), ոսկեխարշափ (162), ոսկեփող-փող (159), ոսկելաց (186), ոսկեմոռունչ (143), ջղակոտոր (341), սրնզածոր (147), տիեզերատենչ (319):

դ) **Թվական+գոյական՝ հազարափաթիլ (146):**

ե) **Թվական+ածական՝ հազարոտան (329):**

զ) **Ածական+գոյական՝ անդորրամահ (196), բազմակեանք (187), բիւրանւազ (187), ծանրափայլ (130), հեզակոյս (186), նորանւէր (305), շառաշունչ (195), սեւալոյս (185), սրանչափառ (319), տօթակրակ (174):**

է) **Ածական+ածական՝ բիւրմունէ (146), զգայակառ (186), ծածկաթարուն (214):**

ը) **Ածական+բայ՝ անհունատենչ (158), թուլակազ (289), խօլատենչ (186), մթնատարած (239), տրտմալաց (327):**

թ) **Մակրայ+գոյական՝ մեղմատրտունջ (177):**

ժ) **Մակրայ+բայ՝ մեղմատատան (158), միատրոփ (135), մշտանինջ (195):**

Կ. Զարյանի բանաստեղծությունների այս ընտրանքում կա միայն երկու նորակազմ անհոդակապ բարդություն՝ *հերիաթասան* (158), *փարփառ* (145):

Ածանցավոր նորակազմություններն ըստ հիմնական ձևույթի նկատմամբ ածանցի գրաված դիրքի՝ նախածանցավոր՝ *անդաշոյն* (181), *անդրոշ* (192), *ենթամարդ* (297), *վերկոչել* (143), *համատրոփ* (147), համածանցավոր՝ *անպատրանք* (162), *անպեղիած* (193), և վերջածանցավոր բառեր են՝ *արրուշումած* (156), *զովեցուցիչ* (176), *հոգեղինացած* (181), *հուրիուրան* (159), *մարմինիկ* (154), *մոզացում* (322), *պսպղանք* (162), *սարտանք* (177), *տեւուն* (193), *ուսուցւած* (185):

Բանաստեղծը սեղմ նորակազմություններ է ստեղծել նաև անվանակազմ բայերի միջոցով. չափածոյի լեզվին բնորոշ ոճական այս հնարանքը, որ տեղի է ունենում պարզապես բայական վերջավորության կցումով կամ բայակերտ կենսունակ ածանցներով⁸, ձուլում է շարժումն ու հատկանիշը. ... եւ մարմնիդ ծալքերի մեջ բիւրեղացած լոյսերը տիեզերքով են *երաժշտացած...* (321): Ամէն ինչ հանկարծ *ապակիանում* է (319): Այս վերելքը արքայական// *Աստիճանւած* բլրան կողին//Պատմութիւն է անիրական (316): Ա՛հ, հորիզոնը թափւել է ծովի *բռոտրած* ափին// Եւ *մոմակաւել* մատներիս ծայրին (226): Քաղիր որթան ողկոյզների հետքը սարտած//Եւ *զուսանիր* քեզ այցելող աշխարհներին (290): Ինչքան պիտի տեսի սուզը *մառախտուլած* մեր դաշտերում (297): Սրափից արթնացած հասկերը բոլոր // *Զանգակեն* հուժկու, ձայնով անսովոր (144): Թառել էր վկտ-վկտ դալկացնող տոռթը, // Հեշտ երազանքով կրքեր *ասեղող*, զինովցած օդը (206):

Կ. Զարյանը հաճախ դիմում է նորաբանության սոսկ հանգ ու չափ

⁸Տե՛ս Յու. Ավետիսյան, Արևմտահայ բանաստեղծության լեզուն, Եր., 2002, էջ 376:

լրացնելու համար, ուստի երբեմն կրծատում կամ արհեստականորեն երկարացնում է բառը, փոխում բառի ձայնական կազմն ու ներդաշնակությունը, ինչպես՝ **հազարոտան**՝ փոխ. հազարոտանի (329), **ցրտաշուշունչ**՝ փոխ.՝ ցրտաշունչ, **կոլոր**՝ փոխ.՝ կլոր (318), **բազմածաղկ** (199), **հրածաղկ** (167) փոխ. բազմածաղկ, հրածաղկ, **մաւ** փոխ.՝ մաւի (168) և այլն:

Այնուամենայնիվ, Կ. Զարյանի նորակազմություններից շատերը, կարծում ենք, գեղարվեստական խոսքի ուժով կարող են ժամանակի ընթացքում դառնալ գրական լեզվի բառապաշտիկ կենտրոնակ միավորներ:

Ի տարբերություն բանաստեղծական մյուս շարքերի՝ 1914-1948 թթ. գրված բանաստեղծություններում Կ. Զարյանն ազատորեն գործածում է մեծ թվով օտարաբանություններ, որոնք հիմնականում եվրոպական լեզուներից են՝ իտալերենից, ֆրանսերենից, անգլերենից: Այս բառերը գործածվում են ոճական հատուկ նպատակով՝ տեղի, միջավայրի համոզիչ երանգավորում ստեղծելու համար: Մեր հաշվումներով դրանք 64-ն են՝ **ապօկալիպս**՝ աշխարհի կործանում (188), **արիստեկտ**՝ ճարտարապետ (200), **աֆիշ**՝ ազդ (189), **բազիլիկա**՝ միջնադարյան անտիկ տաճար (219), **բանծօ**՝ լարային գործիք (155), **բառման**՝ զինեպան (179), **բասօ**՝ թավ ձայն (170), **բար**՝ խորտկարան (255), **բորոգան**՝ մամուռ (220), **բորսա**՝ սակարան (188), **բուլվար**՝ գրոսավայր (134), **բոնչօրնօ**՝ ողջույն (331), **զարած**՝ ավտոտնակ (268), **գոնդոլ**՝ մակույկ (182), **զրամոֆոն**՝ ձայնասկավառակիչ (151), **գուլք բայ**՝ ցուեսություն (283), **դիսկանտ**՝ հիմնական մեղեղին ուղեկցող մեղեղի (221), **դոլար**՝ տարայրամ (188), **դօժ**՝ դուրս (181), **զողիակոս**՝ կենդանաշրջան (341), **ժագ(ջազ)**՝ երաժշտարվեստի տեսակ (180), **ժոկեյ**՝ ձիարշավի հեծնորդ (188), **իմպերատօր**՝ կայսր (333), **իմպերիալ**՝ արքայական (257), **լազունա**՝ նավակ (211), **լեզենդա**՝ ավանդազրույց (244), **լենտօ**՝ յամբ, մեծավերջ (221), **կալէ**՝ արահետ (172), **կապուչին**՝ սուրճի մի տեսակ (316), **կաֆէ**՝ սրճարան (287), **կօկա կօկա**՝ ըմպելիք (252), **կոկտեյլ**՝ բաղրահամ խմիչքախառնորդ (177), **կոռուպերատիվ**՝ համագործակցային (168), **հա ու դու յու դու**՝ «ինչպէ՞ս էս» (261), **մալարիա**՝ ճահճատենդ (173), **մելան**՝ թանաք (168), **մեսիխ**՝ օծյալ, փրկիչ (188), **մետրօ**՝ ստորգետնյա փոխադրամիջոց (187), **միրած**՝ պատրանք, տեսիլ (162), **մորգ**՝ դիարան (188), **շիրօլօ**՝ երգի տեսակ (286), **չերկեսկա**՝ չերքեզի չուխա (244), **պանամա**՝ ամառային զյուսարկ (154), **պեղալ**՝ ոտնակ (221), **պրինցես**՝ իշխանադուստր (286), **զագրանդ**՝ ջազ երաժշտարվեստ (188), **ջին**՝ ոզի (306), **ռեւերանս**՝ ծնկածալ ողջույն (133), **սալուտէ**՝ ողջույն (182), **սանդպիշ**՝ հացի շերտեր մեկրնդմեջ մասվ (188), **սաքսօֆօն**՝ երաժշտական գործիք (286), **սեմաֆոր**՝ լուսացույց (214), **սենթ**՝ ամերիկյան դրամ (306), **սորվէյ**՝ գետնանցում (251), **վուկտէր**՝ մատուցող (255), **վուխսի**՝ խմիչք (223), **տանզօ**՝ կլրոպական պար (188), **տաքսի**՝ վարձու փոխադրամիջոց (171), **տրապէկ**՝ հացկերույթ (136), **ցար**՝ արքա (170), **քիմերա**

առասպելական հրեշ (190), *օազիս*՝ անապատում կանաչ տարածք

(153), *օրելիսկ*՝ կորող (190), *օսորիս*՝ ավտորուս (188), *օրթոդոքս*՝ ուղղափառ (170), *ֆուզա*՝ երաժշտական մեկ թեմայի կրկնություն (221): Ինչպես Ա. Չոպանյանն էր գրում. «Պէտք է ջանալ անշուշտ, որ լեզու մը իր ինքնութիւնը, մաքրութիւնը պահպանէ ու չողողուի, չապականուի օտար տարրերով, բայց օտար տարրերու դէմ, երբ այդ տարրերը անհրաժեշտ են՝ դուրը բոլորովին գոց պահելը անխելքութիւն է, ...այդ մաքրամոլութիւնը կ'աղքատացնէ զայն...»: Մեր մէջ շատերը «սալոնին»՝ «դահլիճ», «օքերային»՝ «նուազաթատրոն», «պուլվարին»՝ «լայնափողոց» կ'ըսեն, գործածելով թարգմանուած բառեր, որոնք բուն իմաստը չեն տար ու երբեմն ալ ծիծաղելի են ինքնին: Դրանց ձիշդ համարժէքը չկար հայերէնի մէջ կամ կարելի չէր դարբնել: Երբեմն բառը հայերէնի մէջ ընդունուելով զայն քիչ մը փոփոխած, հայացուցած են, երբեմն ալ նոյնութեամբ ընդունած եւ պահած են»⁹:

Իր բանաստեղծություններում Կ. Զարյանը հաճախ է գործածում հատուկ անուններ՝ տեղանուններ և անձնանուններ, որոնք ներառում են բանաստեղծի եղած ու ապրած վայրերի մասին ինքնատիպ ու գողտրիկ նկարագրություններ, համապատասխան մթնոլորտ ստեղծող տեղեկություններ՝ սկսած Հայաստանից՝ *Այրիվանք* (136), *Արագած* (161), *Արարատ* (148), *Բազարան* (207), *Երվանդաշատ* (207), *Զանգու* (150), *Զեղուն* (207), *Ծաղկաձոր* (154), *Կոնդ* (152), *Սարդարապատ* (158), *Սիս* (328), *Սեւան* (158), *Սուլր Կարապետ* (136), *Վաղարշապատ* (170), *Քանաքեռ* (143), մինչև Եվլոպա ու Ասիա՝ *Ակրիկէ// Աֆրիկա* (286), *Բերդեհեմ* (166), *Բէորդկիլիֆ* (288), *Բրոդվէ* (256), *Բրուկին* (253), *Գանգէս* (278), *Գարդա* (230), *Գիբէրտի* (222), *Եւրոպա* (280), *Զոյեա* (270), *Էյֆել* (188), *Էպոմեռ* (329), *Թմբկթու* (287), *Իզոլա Բելլա* (153), *Իռրիկ* (279), *Լիոն* (286), *Լոմբարդիա* (230), *Լոնդոն* (234), *Լուչոն* (223), *Կարահիրի* (222), *Կելլան* (188), *Կիկի* (188), *Կոնգօ* (188), *Կուրա* (223), *Հալ* (188), *Հնդուստան//Հնդկաստան* (232), *Հոնկոնգ* (224), *Հռոմ* (327), *Ճապոն* (232), *Սարանգոնա* (217), *Մադրինա* (330), *Մադուր Աւնիւ* (254), *Միստենգետ* (190), *Մոնմարտր* (188), *Մոնպարնաս* (188), *Նեապոլ* (329), *Նուկ* (306), *Շանխայ* (223), *Չին* (232), *Պրոկուրասի* (217), *Ջիուտոս* (253), *Ռուսին* (213), *Սահարա* (154), *Սան Վիտո* (331), *Սանտեազօ* (223), *Սէլլոն* (287), *Սեն* (188), *Սենտրալ Պարկ* (252), *Սիեռա Լէռն* (223), *Սպանիա* (315), *Վեզուվ* (188), *Վենետիկ* (219), *Վուլստոլ* (263), *Տայմզ Ակտեր* (251), *Շիլիքա* (154), *Փարիզ* (191), *Օրկանիա* (222), *Օր Սան Սիրել* (222), *Ֆրանսիա* (234), *Ֆիլիպիններ* (222), *Ֆիֆտ Աւնիւ* (252), *Ֆլորիան* (219), *Ֆլորիդա* (218), *Ֆորիո* (329):

Կ. Զարյանի բանաստեղծությունների բառապաշտարի քննությունը պարզում է նրա հակումը ժողովրդական խոսքարվեստի ամենաբազ-

⁹ Ա. Չոպանյան, նշվ. աշխ., էջ 99:

մազան միավորների՝ հարադրությունների, դարձվածքների ու կրկնավոր բարդությունների, փոքրացուցիչ-փաղաքշական ածանցներով բառերի նկատմամբ:

Անվանական հարադրություններն ունեն տարբեր դրսևորումներ՝ գոյականական, ածականական և այլն՝ *ալ-կրակ* (134), *անցած-զնացած* (240), *արիւն-պղինձ* (214), *բուր ու բուրան* (275) և այլն: Հայերենում ընդունված այս հարադրությունների կողքին ուշագրավ են անհատական հարադրությունները, որոնց միջոցով հեղինակը, օգտվելով և ժողովրդախոսակցական լեզվի գանձերից, և՛ օտար բառերից, հարստացրել է իր ստեղծագործությունը: Ինքնատիպ այս կապակցությունները բանաստեղծական գեղեցիկ, սեղմ ու հիասքանչ պատկերներ են՝ *ամազ կազմել* (217), *այգեկութ անել* (216), *առասպել ասել* (152), *զամ բռնել* (309), *երեր զալ* (201), *զայրոյթ ծամել* (233), *կուկուզ անել* (142), *հալ լինել* (135), *հմայք ասել* (266), *մուրթ զալ* (267), *ռեւերանս անել* (133), *սառ կտրել* (249), *վեր թնդալ* (213), *սրոր ածել* (212), *փշուր զալ* (273), *օրոր զալ* (336):

Կ. Զարյանի գործածած դարձվածային հարադրությունները՝ *բարի ձանապարի*, *բարի վերապարձ* (219), *սեւ ձակատազիր* (138), *ծնունդ առնել* (332), *շունչ տալ* (199), *նշան տալ* (262), *հասակ առնել* (246) և այլն, սովորականներից տարբերվում են հասկացությունը պատկերավոր արտահայտելու ունակությամբ, թեև ոչ դարձվածային հարադրությունները ևս համապատասխան համադրական բայերի համեմատությամբ երանգավորված են ժողովրդայնությամբ. Լուսինը, *ոսկի կտրած*, իշում է ձամբի վրայ... (169): Դա ի՞նչ բան էր՝ *զլիս եկավ* (149): Ես *իմ արեւ*, դա ի՞նչ բան ա (149): Եթէ ձամփա պիտի առնես՝ *մնաս բարով* (290): Վարդապետ (219): *Մնա ք բարով:* //Վերջին զանգը իմ հրամեշտի դողանջում է (212): *Բարի եկաք*, իմ բայլերիս արձագանքներ (210): *Քրի տակ երգում* է մի տրտում շարական (164): Զանգուն մորս փեշից բռնած, //Ո՞ւր ա զնում (149): Զայները խուլ...//ծով մըն են *մեռած հոգիներու* ցաւերուն մէջ սառնամած (129): Եւ ես մնացի ինչ որ էի-//Ուխտագնաց՝ *մարմին չառած* երազների (268):

Հարադիր բայերի գործածությունը հեղինակն այնքան անհրաժեշտ է համարում, որ հաճախ է դիմում հարադրի կամ բայական բաղդրիչի հոմանիշների կիրառմանը: «Ժողովրդական հարադրությունների մի տեսակը պետք է համարել այնպիսի բարդությունները, որոնց բայական բաղդրիչի արմատը կրկնվում է իբրև հարադիր մաս, որով ստացվում է կրկնավոր բարդությունները հիշեցնող յուրահատուկ բայական հարադրություն»¹⁰: Կ. Զարյանի ստեղծագործելու ոճին բնորոշ այս հարադրությունները օգնում են նրան խուսափելու կրկնություններից, գտնելու առավել պատկերավոր լեզվական միջոցներ՝ *Կանչ կանչել* հանդերին, // Հրաւիրել բաղերը ոսկեծին (199): Մինչ ես սրտիս

¹⁰Տե՛ս Ա. Պապոյան, Պարույր Սևակի չափածոյի բառապաշարը, Եր., 1970, էջ 70:

Խարց եմ հարցնում, //Գնացքը սուլում, դղրդում է, արագ մեկնում (213): Քարայրի մեջ նստած **միտք է մտածում, //Մինչ իր հօտը մթութիւն է արածում (143):** Սուտենայ Աստուած եւ հարբած **պար պարի (172):** Դու սահում ես թոկի վրայով...**խաղ խաղաղով** հետը մահի... (308): Ցուրտ զիշերը **հազ մը խաւար կը հազայ... (130):** Եզրս դաժան ու այսակիր ու արօրս շէղկ կարմիր // **Տառապանքի ակօսներն են ակօսում (195):**

Կ. Զարյանի բանաստեղծություններում տարատեսակ համադրական և հարադրական կրկնավոր կազմությունների միջոցով արտահայտվում է գործողության կամ հատկանիշի սաստկացում, ամբողջականություն, որով պատկերն առավել իրական է դառնում: Կրկնությունը «...առավել չափով գործուն է ժողովրդական-խոսակցական լեզվում և, մասնավորապես, բարբառներում: Այդ եղանակով ամեն օր ու ամեն ժամ մարդ ուզածի չափ կարող է կազմել նորանոր բառաձևեր, որոնք հաջող ու տեղին լինելու դեպքում կմտնեն շրջանառության մեջ կամ հակառակը, մեկ անգամ գործածվելով, այդպես էլ կմոռացվեն՝ առանց արժանանալու քաղաքացիական իրավունքի»¹¹: Միայն ձայնը հովի մերք ընդ մերք հաշող անցնում է յանկարծ տխուր ու **դողդող (175):** ...մարմնիս մեջ միրճած եաթաղանի պէս **սուրասուր** վէրք է պեղում (319): ...եւ ափերով իմ ձեռքերի խմած լոյսը **ջերմաջերմ** պայծառ հոգուդ աղբիւրն են թարմ (321): Ինչ-որ մի տեղից մի **գուլգուլացող** աղբիւր է վազում (339): Մեզ տանում է **հրահուր** մի նաւ (295): **Փայլակ-փայլակ** հուր են հանել եւ կիսաբաց շրթունքներից // **Քուլա-քուլա** ծուխ է ելել (149): Նրա լոյսերով **հասկ-հասկ** հնձաւծ // Գարնան ոսկե մանգաղներով (158): ... Զղերս **թել-թել** // Բեւերի շուրջն են փաթաթւել (172): Զանգուն ասես՝ մօ՛րդ շալը գիլից առել// **Պատառ-պատառ** դաշտն է նետել, հրավառել (150): Ծառերի տակ **պնակ-պնակ** կրակ թափիւց (268): **Էջ-էջ** ես պատռեցի գիրքը սրտի (268): Եւ վարսերը **շողջող** ալիք ծալած մի յարդ // Վայր է ընկել քունքերի վրայ (260): Եւ գինին օրերիդ կում կում խմի մինչեւ տակը (243): Բայց ի՞նչ են, տնե՞ք են **լուռ ու մուռ (240):** Ասես թէ լինէր մի **հուլա-հուլա** // Պարιած ուշ ժամին կախարդ գիշերւայ (224): Թառել էր **վէտ-վէտ** փոփոխուն ծովի հմայքը մշտագեղ (206): ...եւ տարսին մեր սրտի **մղոն-մղոն** այրում էր անցեալը (171): Կրկնավոր կազմությունները հիմնականում մակրայներ են, քանի որ, ինչպես նշում է Լ. Հովսեփյանը, կրկնությունը անվանական խոսքի մասերից մակրայների կազմության հիմնական եղանակն է եղել հայերենի զարգացման բոլոր փուլերում¹²:

Կ. Զարյանի բանաստեղծություններին ժողովրդականություն են հաղորդում խոսակցական լեզվին բնորոշ փաղաքշական մասնիկների կիրառությունները Քշիր քո օրերդ մենակ եզներով, որոնց **ոտիկները**

¹¹ Կույն տեղում, էջ 31:

¹² Տե՛ս Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմության վերլուծական տիպը, Եր., 2016, էջ 37:

կարմիր են չորացած խոտերի դաշտում (322): Դիմացի **ցածիկ** տնակի առաջ վիթքել է մի ծառ (316): Մի տիկին պառաւած ձեռքերով //Շոյում է կուչ եկած **շնիկին** (306): Մի **լորիկ** սրտի երգում է հանդում, //Ուր ման է զալիս գերանդին հրեղէն (285): Շաշող բոցով վառում **զլանիկը** մեր//Եւ ներս քաշում մի քիչ սփոփանք եւ մի քիչ ստուեր (251): **Պարզուկ** են տները դիմացի (228): Երբ մտածում եմ իմ **Սարտինիկի** //Խելազար ու վառ սիրոյ արկածին, // **Թուխլիկ** Մանոյին սրտած ծիծերով, //Մրգի պէս լեցւած կարմիր շրթերով (223): Մերկ դաշտերում փնտում յասմիկ// Եւ բառերի ծայրին թառած մի **հայրենիկ**, // Մի **հայրենիկ՝** անգիր սերտած, մաշւած մի գիրք (225): Ունկ ենք դնում քամիին ու **լոիկ** սպասում (140):

Կ. Զարյանի բանաստեղծությունները հարուստ են նաև ժողովրդախոսակցական տարբեր բառերով ու արտահայտություններով, ինչպես նաև բարբառային բառաձևերի գործածությամբ, որոնք խարսխված են ազգային կենսափիլխոտփայության, ժողովրդական լեզվամտածողության վրա և յուրահատուկ ոճական երանգավորում են հաղորդում նյութին. **Աղա հայլան, աղա Մկո, տո, շան տղա, ինչ ես կատղել** (150): -- **Բա ես քու մե՛ր, բա ես քու հե՛ր, հարամ զաղա** (150): Ով որ Զանգուի ափին չի նստել, //Սայաթ-Նովայից չի լսել գովքը **զօզալ** իր եարի...ի՞նչ զիտի կեանքից (201): Գլխիս դրի **թազա փափախ** (156): Թուշը **հածիր**, բացիր մեջքի կարմիր զօտին (149): **Թամադա** քեֆի, հրամայի ր խմենք (203): Առնեմ **թվանք**, առնեմ **խանչալ** (150): - **Ճի՞գ տու, քաշի... , արա հօ՛, արա ...** (208): Ես հագել եմ **չուխա** մի նոր (159): Բուլվարում **չուզան** են քաշել(135): Եդ **տնաշէն, մերքս է եկել..** //Այ, **Էն ա, տես, եռվ ա դարձել, մտել ա դաշտ, ո՞ր ա գնում...**(149): -Աղա Մկո՛, **քեռն ես, ի՞նչ ա** (149): -- **Հալա մի կաց, ախպէ՛ր, հալա մի կաց** (149): - **Տո,** մի սպասի ր... - **Աղջի** Սո՞նա, **աղջի** Սո՞նա(149): Մի քոսոտ կատու **փրոշտրկում է** (133): Եւ զնում են **մեղան** անօթի, դողալով (163): ...ափերդ բամբ ձայնով հնչել են եւ **զիլ** աղաղակ արձակել (320): Մահը այցեսում է **դրկել** մեր ծնւած օրից (312): ...նման մահազանգ զարնող **զուլումի** (220): Ես վախում եմ հարձնել ինձնից...(216): ... Չարժանացա **յարիս բաղչան** հերկելու (159): Նման մորթւած **թազա** կուկու/ Սիրտս արին **ցաւ ա ընկել** (149): Այս արտահայտություններից շատերը, իհարկե, ունեն իրենց համարժեքը գրական լեզվում, սակայն դրանք չեն կարող տալ միջավայրի նկարագրության ձշգրիտ պատկերացում և կենդանի ներկայացնել լեզվի հոգին ու շունչը: Ինչպես Ա. Չոպանյանն էր գրում, զուտ ռամկական կամ զավառական բառերը «...աւելի կեանք կը պարունակեն, աւելի յստակ ու արագ, յետեւաբար եւ աւելի գեղեցիկ կերպով կ՝ արտայայտեն մտածումը»¹³:

Այսպիսով, «Զարեան իր կախարդիչ արուեստով զալիս է բարձրացնելու ու տարփոխելու մեր դարաւոր իտէալը եւ հոգի ու իմաստ է դնում այնտեղ, ուր փոքրողի յուսաբեկներ իրենց զլուխներին փոշի ցա-

¹³ Ա. Չոպանյան, նշվ. աշխ., էջ 96:

նելով միայն վայ ու կական էին լսում: Մեր հայրենի հողի ծոցում, նրա յութի ծալքերի մէջ, նա զտնում է կրանիթէ պատուանդաններ մեր վաղուան յոյսերը բարձրացնելու համար»¹⁴:

Բանալի բառեր – աշխարհիրմոնուս, նորակազմություններ, օտարարանություն, իմաստային, կրկնավոր, լեզվական կառուցվածք, հարադրական, համադրական, բառապաշար, գրական լեզու, տաղաշափական

СУСАННА ГРИГОРЯН – Лексика стихотворений Костана Заряна (1914–1948). – Лексике стихов К. Заряна присуще разнообразие. Они богаты идиоматическими оборотами, редупликативными конструкциями, неологизмами, не отражёнными ни в одном из армянских словарей. Поэт мастерски использовал богатейший словарный запас родного языка, а по мере необходимости охотно прибегал к его словообразовательным возможностям, обогащая тем самым не только собственные произведения, но и состав литературного языка.

Стихи Заряна выделяются своеобразными лингвистическими структурами, которые придают им необычайную экспрессию и эмоциональность.

Ключевые слова: миропонимание, неологизмы, варваризмы, смысловой, редупликативный, языковая структура, лексика, аналитический, литературный язык, метрика

SUSANNA GRIGORYAN – The Vocabulary of Kostan Zaryan's Poems (1914–1948). – The vocabulary of Kostan Zaryan's poems is rich and multiform. Idiomatic expressions, reduplicative structures, author neologisms that are not expressed in any Armenian dictionary find their place in Zaryan's poems. The poet made use of the whole rich lexical material of our language masterly and out of necessity he also used the word-building opportunities of the Armenian language, creating new words and expressions, in this way enriching not only the language of his works but also the boundaries of the literary language. K. Zaryan's poems have unique linguistic structures that give his poems unparalleled expressiveness and emotionality.

Key words: world perception, neologisms, barbarism, semantic, reduplicative, linguistic structure, vocabulary, analytical, closed /synthetic, literary language, prosodic

Ներկայացվել է՝ 10.09.2019

Գրախոսվել է՝ 22.09.2019

Ընդունվել է տպագրության՝ 28.11.2019

¹⁴ **Ս. Ահարոնեան,** նշվ. աշխ., էջ 59: